600.0086.28.06.05

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2005 թվականի № 86Ն
ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի №20Ն ԵՎ №21Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը և «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2004 թվականի փետրվարի 9-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» №20Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

ա) վերնագիրը «սակագնի» բառից հետո լրացնել «հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշի» բառերով.

բ) նախաբանում «17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 8-րդ կետը» բառերով.

գ) 1-ին կետում «սակագինը» բառը փոխարինել «սակագնի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշ» բառերով, իսկ «ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ» բառերը՝ «ցենտ 1 կՎտժ-ի համար» բառերով,

դ) 2-րդ կետում «սակագինը» բառը փոխարինել «ցուցանիշը» բառով:

2. Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2004 թվականի փետրվարի 9-ի «Հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» №21Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

ա) վերնագիրը «սակագնի» բառից հետո լրացնել «հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշի» բառերով.

բ) նախաբանում «17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 8-րդ կետը» բառերով.

գ) 1-ին կետում «սակագինը» բառը փոխարինել «սակագնի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշ» բառերով, իսկ «ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ» բառերը՝ «ցենտ 1 կՎտժ-ի համար» բառերով,

դ) 2-րդ կետում «սակագինը» բառը փոխարինել «ցուցանիշը» բառով:

3. Սահմանել, որ՝

ա) բնական ջրահոսքի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից և հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման ժամանակ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կընդունվի սակագնի սահմանման հայտը ուսումնասիրության ընդունելու ամսվան նախորդող ամսվա փաստացի միջին փոխարժեքի մեծությանը հավասար.

բ) յուրաքանչյուր տարի՝ մինչև դեկտեմբերի 1-ը, կկատարվի մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը բնական ջրահոսքի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններում և հողմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձանց կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերահաշվարկ.

գ) սակագների վերահաշվարկի ժամանակ սույն կետի ա) ենթակետի համաձայն սահմանված դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կընդունվի նախորդ 6 ամիսների (մայիս-հոկտեմբեր) դրամ/ԱՄՆ դոլար փաստացի միջին փոխարժեքին հավասար.

դ) վերահաշվարկման արդյունքում սահմանված սակագներն ուժի մեջ կմտնեն տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
28 հունիսի 2005 թ.